ԻԲ. ՆԱԽԱՁԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Երբ զարթեցայ, գիշեր էր: Որքա՞ն ժամանակ անցել էր օրից, քանի՞ ժամ քնել էի, ես չկարողացայ գիտենալ: Փափուկ եւ տաք գիշեր էր: Որքա՞ն գեղեցիկ վառւում էր ամառային երկինքը իր փայլուն գոհարներով. որքա՞ն մեղմ եւ մտախոհ կերպով սահում էր կիսալուսինը պարզ եթերքի միջով:

Ես պառկած էի դալար խոտերի վրայ, եւ խիստ ախորժ ծուլութեամբ թաւալւում էի մի կողքից դէպի միւսը: Ականջ էի դնում: Ամէն տեղ տիրում էր խորին լռութիւն, բոլորը՝ հանգստանում էին: Արթուն էր միայն վտակը, որի ափի մօտ պառկած էի. ես լսում էի նրա խուլ-մելամաղձական խոխոջմունքը, նա անդադար վազում էր եւ վազում, նա քուն եւ հանգստութիւն չունէր: Ահա, հովասուն զեփիւռը փափուկ թեւքը քսեց իմ երեսին եւ շոացնելով անցաւ. կարծես, ուզում էր ասել՝ «տե՛ս, ես էլ արթուն եմ»:

Աչքս դարձրի դէպի աստղազարդ երկինքը: Նայում եմ: Այո՛, դեղեցի՛կ են աստուծոյ լուսաւորները: Որոնում եմ նրանց մէջ իմ աստղը, երկա՛ր որոնում եմ, բայց չեմ գտնում: Ահա՛ երկու աստղեր. նրանք ծանօթ են ինձ, ես շատ անգամ տեսել եմ նրանց, համբուրել եմ... շատ անգամ նրանք նայել են ինձ վրայ ջերմ քնքշութեամբ...: Ես ճանաչում եմ ձեզ, սիրուն աստղեր, դուք նմանում էք Սոնայի տխուր եւ արտասուալի աչքերին, որպէս այն վերջին գիշերը, երբ նա բաց արաւ իմ բանտի դուռը եւ ասաց՝ «փախիր, Ֆարհատ»: Ահա երկու աստղեր եւս, ինչպէս հպարտ եւ ինքնահաւան կերպով փայլում են նրանք. նմանում են նրանք Մարօի լի կրակով աչքերին, երբ նա հրացանը ձեռքին կանգնած, ժպտում էր այն սարսափելի րոպէում, երբ ես շաղախոած էի ղաբանի արիւնով:

Սիրո՛ւմ եմ ձեզ, գեղեցիկ աստղեր: Ահա՛ անցաւ մի սեւ ամպ եւ ծածկեց իմ տեսութիւնից նազելի աչիկները...

— Ա՛խ, Սօնա... ա՛խ, Մարօ...

— Ի՞նչ է, — լսելի եղաւ մի ձայն եւ իմ առջեւ նկատոեցաւ մի պատկեր, որպէս կերպարանքը գիշերային ուրոականի:

Մի սարսուռ վազեց բոլոր մարմնիս մէջ:

— Ես եմ, Ֆարհատ.

— Ա՛խ, Մարօ...

Երեւակայեցէք իմ ուրախութիւնը, ուրախութիւնը լի վառոած կրքերով մի պատանիի, որ գիշերային լռութեան մէջ, հեռու մարդկային բնակութիւնից, գտնում է նրան, որին սիրում է: